«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների նշանակությունը պատմության դասին

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սյուզաննա Եղիազարյան

Ուսումնական հաստատություն՝ Ք.Արտաշատ համար 5 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն----------1

Ներածություն----------2

Գործնական աշխատանքների կազմակերպման առանձնահատ-

կությունները----------3

Հայոց պատմություն առարկայի գործնական աշխատանքների կազմակերպ-

ման ձևերը----------6

Եզրակացություն----------11

Գրականություն ----------12

Ներածություն

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ: Չնսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ մեծ կարևորություն են տալիս ուսուցման պրակտիկ ուղղվածությանը: Ուշադրություն դարձնել այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք, ենթադրվում է, որ կիրառություն կգտնեն գործնական կյանքում: Ուսուցման պրակտիկ ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլ նաև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ: Գաղտնիք չէ, որ բնական գիտությունների հանդեպ սովորողներն ակտիվ հետաքրքրություն չունեն: Դեպի պրակտիկան կողմնորոշված ուսուցումը նպատակ ունի գիտելիքները կապելով փորձերի, կյանքի հետ դրանք առավել հետաքրքիր դարձնել: Նման պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, ասել է թե՝ ապահովվում է գիտելիքների իմաստավորված յուրացում: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը մոտիվացիոն հզոր գործոն է և կարող է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշման մեջ արդեն լուրջ դերակատարում ունենալ: Գործնական աշխատանքը դպրոցում բավականին մեծ դեր և նշանակություն ունի:Այսպիսի աշխատանք կատարելիս սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակ ը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:Մանկավարժական գործընթացի կառավարումը նախևառաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը։ Մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություն, տեսականը վերածելու գործնականի:

Այս առումով Հայոց պատմության դասին կարևորում ենք գործնական աշխատանքների իրականացումը,որոնց միջոցով նախ և առաջ հեշտացնում ենք նյութի ուսումնասիրումը,ինչպես նաև այդ գիտելիքի օգտագործումը հետագայում: Գործնական աշխատանքի միջոցով ապահովում ենք նաև ութ առանցքային կարողունակությունների ձևավորմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին: Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքները բազմազան են . պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:

Գործնական աշխատանքները կարող ենք իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը: Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը: Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե , իհարկե, աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտեիլքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար: Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին:Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝համեմատություն կամ աղյուսակ լրացնել, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով:Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը: Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր: Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է , որ նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել: Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար:Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել:

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),
- *ստեղծագործական*, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐ

1.Որպես գործնական աշխատանքի տեսակ ներկայացնենք դերային խաղը, որն ունի կիրառման լայն հնարավորություններ և հաճախություն ուսումնական տարբեր առարկաների շրջանակում: Սակայն պետք է անկեղծորեն նշել, որ դերային խաղը ոչ միշտ է կիրառվում նպատակային, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ոչ միշտ է լիարժեքորեն իրացվում դերային խաղի ներուժը: Այն իրականում շատ ավելի լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզակամային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Պետք է իրավամբ նշել, որ դերային խաղն իր մեջ ամփոփում է գործնական աշխատանքների բոլոր 3՝ վերարտադրողական, որոնողական և ստեղծագործական տեսակների տարրեր: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործանական բազմափուլ աշխաանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ:

Առանձնացվում է դերային խաղի 2 տեսակ՝ ուղղորդված և հանպատրաստից՝ դասակարգման հիմքում դնելով սովորողների ակտիվ կամ պասիվ որոշում կայացնելու հանգամանքը: Ուղղորդված դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար դրանք պետք է լինեն մանրակրկիտ ծրագրված և լավ ուղղորդված: Կարևոր է առաջադրանքը սկսելուց առաջ անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ինչի՞ն է նպաստում դերախաղի կազմակերպումը:
- Որո՞նք են դերախաղի նպատակն ու խնդիրները:
- Որո՞նք են դերախաղի ընդհանուր կանոնները:
- Որո՞նք են դերախաղի փուլերը:

Հանպատրաստից դերախաղի դեպքում հակառակը՝ պետք է ապահովել սովորողների ազատությունը:

Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով՝ նախապատրաստման, բուն խաղի և անդրադարձի:

- Առաջին՝ նախապատրաստման փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերային խաղի ընթացքում: Բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ առաջադրանք: Դերակատարները կարդում/մտածում են իրենց դերերի մասին:
- Երկրորդ՝ խաղի փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք՝ կախված իրավիճակից՝ կիրառելով ձեռք բերված հմտությունները: Մյուսները կատարում են իրենց դիտորդական հանձնարարությունը:
- Երրորդ՝ անդրադարձի փուլում խաղացողներն առաջին հերթին արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները: Դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները: Հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին, և աշխատանքն ամփոփվում է եզրակացություններով:

Ցանկացած դերաղի համար կան հստակ կանոններ, որոնց պահպանումը հնարավորություն կտա արդյունավետ աշխատելու և հետագայում էլ բարելավելու արդյունքները, ինչն էլ հենց ձևավորող գնահատման նպատակն է: Այդ կանոններից են, օրինակ, որ ուսուցիչը ակտիվ դեր չի խաղում դերային խաղի մեջ: Նա հոգ է տանում, որ մասնակիցները պահպանեն սահմանված կանոնները, հետևում է ընթացքին և անհարկի չի միջամտում դերախաղին: Կամ՝ որ մասնակիցները որևէ դեր ստանձնելու պարտավորություն չունեն, կարող են ընտրել դեր կամ լինել դիտորդ: Կարևոր կանոն է, որ սովորողները հստակ տարանջատեն խաղի կերպարին դերակատարից և այլն:

Դերախաղի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է, որ ուսուցիչը հասկանալի և պարզ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, որ սովորողները անձնական նախաձեռնության հնարավորություն ունենան: Միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որոնք կնպաստեն դերախաղի միջոցով ուսումնական նպատակին հասնելուն, խաղն ընտրի տարիքային խմբին համապատասխան, նախապատրաստի համապատասխան պարագաներ և այլն:

Դերախաղով կարելի է ամփոփել ցանկացած արքայատոհմի ժամանակաշրջանի ավարտ կամ պատմական հետաքրքիր դեպք:Առաջինի դեպքում սովորողներից ամեն մեկն ըմտրում է իրեն դուր եկած կերպարի և ներկայացնում նրան պատկերավոր: Երկրորդի դեպքում դերերը բաժանվում են և թատերական ներկայացման միջոցով սովորողները ներկայացնում են իրավիճակը:

Բնականաբար, պետք է պատրաստ լինել, որ դերախաղը միշտ չէ, որ հարթ է անցնելու, հնրավոր է, որ կլինեն որոշակի դժվարություններ: Օրինակ՝ սովորողները կարող են կաշկանդվել խաղի ժամանակ: Այս դեպքում անհրաժեշտ է նրանց ազատել սխալվելու վախից: Առաջադրանքին ընտելանալու համար սովորողներին որոշակի ժամանակ է անհրաժեշտ և կարիք չկա նրանց վրա ճնշում գործադրելու:

Եթե դերախաղերը պարբերաբար կազմակերպվեն, բոլոր սովորողները աստիճանաբար կգիտակցեն դրանց կարևորությունը: Հնարավոր է, որ սովորողները թերահավատորեն մոտենան դերախաղերին: Պետք է նրանց բացատրել դերախաղերի կարևորությունը նաև ապագայում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում:

Դերային խաղի գնահատումն իրականացվում է բոլոր այն չափանիշներին համապատասխան, որոնք սահմանված են բանավոր խոսքի համար: Թերևս այս դեպքում կարելի է որպես լրացուցիչ չափանիշ ավելացնել բեմական կամ դերասանական խաղը: Դերախաղի գնահատման սանդղակաշարը՝ ռուբրիկը ներկայացված չափանիշներին համապատասխան կներկայացնենք առանձին:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները

1. Վենի դիագրամով համեմատել զարգացած և զարգացող երկրները:



2. Ըստ Ձեզ երկրի կառավարման, ո՞ր ձևն է ավելի նպատակահարմար երկրի զարգացման համար և ինչու՞:

Պետական կառավարման արդյունավետ ձևի ընտրության հարցը ժողովրդավարական զարգացման ուղին որդեգրած ցանկացած պետության առջև ծառացող կարևորագույն հիմնախնդիրներից է:

Առավել ժողովրդավարական արժեհամակարգերի գաղափարն ամբողջական դրսևորում է ստանում խորհրդարանական կառավարման մոդելի շրջանակներում: Կառավարման այս ձևը երկիրը տանում է ժողովրդավարացման ճանապարհով, ապահովում է ժողովրդի և քաղաքական տարաբնույթ ուժերի առավել ներկայացվածությունը առանցքային որոշումների կայացման գործընթացում՝ նպաստելով քաղաքական համակարգի կայունացմանը և քաղաքակիրթ ընդդիմության ձևավորմանը:

3. Աղյուսակի տեսքով ներկայացնել երկրների կառավարման ձևերը, և դրանց բնորոշ գծերը:

4. Բացատրե՛լ բացարձակ և սահմանադրական միապետությունների տարբերությունները:

Միապետական կառավարման համակարգի պարագայում իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար, ժողովուրդն այստեղ իշխանության ձևավորման գործընթացում էական ազդեցություն չի ունենում: Սահմանափակ միապետություններում, չնայած նրան, որ իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար, միապետի իշխանությունը սահմանափակված է սահմանադրությամբ և օրենքներով:

5. Գրել ի՞նչ է կրոնապետությունը, և ի՞նչ առանձնահատկություններ ունի:

Կրոնապետությունը պետության ձև է, երբ քաղաքական և հոգևոր իշխանությունը կենտրոնացվում է հոգևորականության (եկեղեցու) ձեռքում: «Թեոկրատիա» տերմինն առաջին անգամ հանդիպում է Հովսեփոս Փլավիոսի աշխատությունում: Սովորաբար կրոնապետության օրոք գերագույն իշխանությունը պատկանում է իշխող եկեղեցու առաջնորդին, որը ճանաչվում է «կենդանի Աստված» կամ երկրում աստծո «փոխարքա», «քահանայապետ» և այլն: Պետական գործունեությամբ զբաղվում են հոգևորականները `քրմերը: Օրենքով պետության գլուխը (եկեղեցու առաջնորդը) «Աստծու կամքը» կատարողն է:

6. Ուրվագծային քարտեզի վրա առանձնացնել զարգացած և զարգացող երկրները:



Եզրակացություն

Այսպիսով , ելնելով կատարված ուսումնասիրություններից,կարելի է ենթադրել,որ Հայոց պատմության ժամին կարելի է բազմապիսի գործնական աշխատանքներ մտածել ու իրականացնել:Կարևոր է հաշվի առնել սովորողների տարիքը,դասարանի պատրաստվածությունը,գործնական աշխատանքի տեսակը,թեման և այլն: Գործնական աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Գործնական աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու վանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար: Գործնական աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:Ժամանակի ընթացքում դասերին գործնական աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները: Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը: Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի, աշխարհայացքի ձևավորման գործընթացում:Դասի նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկը ճիշտ մեթոդների և միջոցների ընտրությունն է: Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը,աշխարհայացքի ընդլայնումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա: Դասի արդյունավետությունն էապես կախված է ուսուցչի հմտությունից, պատրաստվածության որակից, ինչը մեծ ազդեցություն է գործում սովորողների վրա: Ուսուցչի աշխատանքը բավականին հաջող կլինի միայն այն դեպքում, երբ նա կատարյալ տիրապետի մանկավարժական գիտությանը, իր առարկային, ինչպես նաև բովանդակությամբ մոտ այլ առարկաներին:

Պատմության դասին իրականացվող գործնական աշխատանքների մեջ խիստ կարևոր է ուսումնական նախագծերի և հետազոտական աշխատանքների իրականացումը.Այստեղ ևս ուսուցչի դերը մեծ է:Նա պետք է առաջարկի այնպիսի թեմաներ ու ծրագրեր , որոնք արդիական լինեն այսօրվա խնդիրներին,նպաստեն այդ խնդիրների լուծմանը:ԵՎ վերջապես մեր կողմից կատարված ցանկացած աշխատանք պետք է նպատակաուղղված լինի առանցքային ութ կարողունակություններով օժտված անհատի ձևավորմանը ու զարգացմանը:

Գրականություն

1 .Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ., էջ 65,

2. Հայոց պատմության մեթոդական ձեռնարկ , «Զանգակ» հրատարակչություն,2014թ.

3. WIKIIPEDIA

4. Կզնակ պաշարների շտեմարան

Հղում Գործնական աշխատանք (ՁԳ) սահիկաշար